

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՋԱՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներում տեքստի լեզվաբանությունը բուռն զարգացում է ապրում: Բացի առանձին լեզուների և լեզվախմբերի զուտ համակարգային քննությունից (կառուցվածքային միավորների համակարգում ունեցած տեղի և նշանակության պարզաբանումից), այժմ հատուկ ուշադրություն է դարձվում նաև այդ միավորների՝ տեքստում ունեցած արժեքներին (վիճակագրական տվյալներին): Այդ առումով, տիպաբանական զուգադրության համար, ինչպես նշվել է լեզվաբանական գրականության մեջ, կարևոր է նաև հնչույթների՝ խոսքում ունեցած կիրառելիության ուսումնասիրությունը:

Զուգադրության ժամանակ հաշվի պետք է առնել ինչպես համընդհանուր (ունիվերսալ) միտումները (օրինակ՝ խոսքում բաղաձայնների գերակշռությունը ձայնավորների համեմատությամբ, հնդեվրոպական բոլոր լեզուների համար, որ բնականաբար հատուկ է նաև մեր երկու գրական լեզուներին), այնպես և լեզուներից միայն մեկին կամ մյուսին հատուկ երևույթները (ասենք՝ միայն արևելահայերենին կամ միայն արևմտահայերենին հատուկ գծերը): Անկասկած, հենց այդպիսի յուրահատուկ երևույթները շատ ավելի մեծ արժեք են ներկայացնում:

Այսպիսով, առաջանում է լեզուների հնչութային համակարգերի վիճակագրական արժեքների զուգադրական քննության անհրաժեշտություն: Թեև, ինչպես նկատել է Ա. Պեշկովսկին¹, գանել բացարձակ հընչավիճակագրական տվյալներ անհնար է: Նրանք կախված են տվյալ կոնկրետ հատվածի բնույթից, ոճից, երբեմն էլ հնչութային կամ հնչու-

¹ А. М. Пешковский, Десять тысяч звуков. Опыт звуковой характеристики русского языка как основа для эвфонических исследований. В сб. «Методика русского языка, лингвистика, стилистика, поэтика». Л., 1925. Այլև՝ Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960, стр. 286—299.

նական տառադարձությունից, Ինչպես հայտնի է, տարբեր հետազոտողներ ներկայացրել են ֆրանսերենի, ռուսերենի և այլ լեզուների ամենահաճախական հնչյունների հաջորդականության անհամապատասխանությունը:

Այդ առումով հետաքրքիր է պարզել, թե մեր երկու գրականների հնչյունների հաճախականությունը արժեքների նույնպիսի տատանումներ տալի՞ս է, թե՞ ոչ:

Արևելահայ և արևմտահայ դրական լեզուների հնչյութային զուգադրությունները, այսպիսով, կարելի է կատարել ոչ միայն համակարգում նրանց ունեցած դերի, տարբերակիչ հատկանիշների և այլնի հաշվառմամբ, այլև խոսքի մեջ ունեցած գործառական դերով, գործառական բեռնվածությամբ: Եթե առաջին դեպքում գործ ունենք հարացուցային հնչյութաբանության հետ, ապա վերջին դեպքում՝ շարակարգային հնչյունաբանության հետ:

Տիպաբանական դրականության մեջ ընդհանրապես հատուկ ուշադրություն է դարձվում տեքստի բաղաձայնական հագեցվածությանը, այսինքն տվյալ լեզվում բաղաձայն և ձայնավոր հնչյունների հարաբերությանը²: Բաղմաթիվ լեզուների հնչաշղթաների զուգադրությունը ցույց է տալիս, որ բաղաձայն-ձայնավոր հարաբերության ցուցիչը լեզուներում ունի վերին սահմանը՝ 2,0, երբ յուրաքանչյուր բաղաձայնի ընկնում է երկու ձայնավոր և հակառակը, երբ յուրաքանչյուր ձայնավորի ընկնում է երկու բաղաձայն՝ 0,5: Դատելով մեր երկու գրականների հնչյութային միավորների համակարգային հարաբերություններից, կարելի է կարծել, որ հայերենը պատկանում է լեզուների բաղաձայնական տիպին:

	արևելահայերեն թիվը տոկոսը	արևմտահայերեն թիվը տոկոսը
Ձայնավորներ	6 16,67	6 19,38
Բաղաձայններ	30 83,33	25 80,64

Հիմք ընդունելով վերոհիշյալ տվյալները, կարելի է վստահորենասել, որ միանգամայն կասկածելի եզրակացության կհանգենք, քանի որ իրականում որևէ լեզվի ձայնավոր—բաղաձայն իրական հակադրության պատկերը երևան է դալիս այդ լեզվի իրացված վիճակում՝ տեքստում. մինչդեռ լեզվաբանության մեջ այն կարծիքն է իշխում, որ որևէ լեզվի համակարգի մեջ առկա ձայնավորների թիվը հակադարձ համե-

² Т. Милевский, Предпосылки типологического языкования, сб. «Исследования по структурной типологии», М., 1963, с. 8

մատական է տեքստում նրանց ձեռք բերած հաճախականությանը: Դեռևս գրաբարի հնչութային համակարգի վիճակագրական քննության ժամանակ պարզվել է, որ համակարգում ձայնավորներ-բաղաձայններ 18,2—81,8 հակադրության փոխարեն տեքստում առկա է համապատասխանաբար 44—55 հակադրություն³: Իսկ ինչպիսի՞ն է պատկերը մեր երկու դրականներում: Հարցի պատասխանը կարող է տալ միայն վիճակագրական քննությունը: Երկու գրականների հնչյունական վիճակագրություն կատարել է Հր. Աճառյանը Վիակատար քերականություն Ներածության հատորում: Հր. Աճառյանի նպատակը ոչ միայն լեզվի բարեհնչության աստիճանի պարզելն է, այլև լեզվի սեղմության աստիճանի բացահայտումը: Հենց այդպես էլ վերնագրել է բաղաձայնատակ լեզվաբանը դեռևս 1912 թ. «Ոստան» ամսաթերթում արևմտահայերենով տպագրած հոդվածը՝ «Հայերենի ներդաշնակության աստիճանը թվաբանական հաշվով»: Հետագայում այդ հոդվածը, անշշան փոփոխություններով, մտել է Վիակատար քերականության մեջ (էջ 258—277)։

Բնականաբար, Հր. Աճառյանի վիճակագրությունը հնչության առանձնահատկությունների խստորեն հաշվառմամբ չէր կարող կատարված լինել: Պետք է ասել, որ հենց սկզբից Հր. Աճառյանը նշում է, որ ամեն մի վիճակագրություն, եթե նկատի ունի լեզվի իրական պատկերը, պետք է հենվի ոչ թե տառերի վիճակագրության վրա, այլ հնչյունների: Այսպես՝ «տառերը պիտի նկատի առնենք, թե ձայները» հարցումից հետո նա եզրակացնում է, որ միայն ձայները: Մինչդեռ հետագա քննության ընթացքում Հր. Աճառյանը գրական արևմտահայերենի համար նշում է նաև ալ, տ, կ, ծ, և այլոց խուլների վիճակագրությունը, որ մնում է տարակուսելի. կամ Հր. Աճառյանը այդ տառերի տակ հասկանում է համապատասխան ձայնեղների շարքը՝ ք, դ, գ, ձ, ց և կամ էլ գրական արևմտահայերենի համար եռաշարք բաղաձայնական ոլորտներ՝ ք-պ-փ, գ-կ-ֆ և այլն: Ավելի հավանական է առաջինը, քանի որ Հր. Աճառյանը նշել է արևմտահայերենի պարզ խուլների ձայնեղացումը և ձայնեղների շնչեղացումը, այնպես որ դրանից հետո դարձյալ եռաշարք հակադրություններով ներկայացվածը ըստ էության տառերը նրկատի ունի:

Գրական արևելահայերենի հնչութային վիճակագրության մի փորձ կատարել է նաև Մ. Ռ. Մելքումյանը՝ հիմք ունենալով միայն տնտեսա-

3 Հմմտ. Ա. Ստեփանյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, Հայոց եզվի կառուցվածքը, Երևան, 1975, էջ 275—277:

գիտական տեքստեր (ընդ որում այդ փորձը սահմանափակ ընտրանքից բացի նաև ընտրանքի ծավալի աննշան մեծությամբ է բնութագրվում)⁴։

Յուրաքանչյուր վիճակագրական քննություն հենվում է որոշակի մոտեցման սկզբունքների վրա. ամենից առաջ առաջանում է ընտրանքի հարցը. ինչպիսի՞ հատվածներ պետք է ընտրվեն, ո՞ր հեղինակներից և այլն։ Ընտրանքի ծավալի և այլ հարցերը այսպես հատուկ չենք քննում, նկատի ունենալով այդ հարցին նվիրված հարուստ գրականությունը⁵։ Այդ հարցը առաջացել է նաև Հր. Աճառյանի վիճակագրության ժամանակ, թե՛նչ հատվածներ վերցնել իրրև նմուշ, Դուրյանից, Պեշկևսկայանից, Օտյանից, Տեմիրճիպաշյանից, Նար-Պեյից, Պարոնյանից և ուրիշ նշանավոր գրողներից էջեր վերցնել, թե նախորդ գրարար հատվածները աշխարհաբար թարգմանել,—որում է Աճառյանը (էջ 264)։ Հր. Աճառյանն ի վերջո ընտրել է վերջին ուղին այն պատճառաբանությամբ, որ նախ, նշված հեղինակներից ռեբերն ոչ մեկը մարուր աշխարհաբար չի դրել. բոլորն էլ խառն են, գրաբարի մնացորդներով։ Հետևաբար նրանցից կազմված աստիճանաշար չէր կարող ուղիղ լինել (էջ 264—265)։ Եվ ապա Վերկորդ ձևին դիմելով՝ մենք պիտի ունենայինք մի քանի առավելություններ. նախ պիտի կարողանայինք գրաբարը համեմատել ուղղակի աշխարհաբարի հետ...», (էջ 265)։ Հր. Աճառյանի նպատակը պարզ է. նա փորձում է գրաբարից սկսած տալ մեր դրական լեզուների հնչյունական վիճակագրությունները միևնույն հատվածների թարգմանությամբ։

Ներկա վիճակագրական քննության համար տվյալ սկզբունքը կիրառելի չէ այն սլատառով, որ այստեղ ժամանակակից հայոց լեզվի երկու վիճակները քննության են առնվում ինքնին, անկախ կերպով և ճշգրիտ եզրակացությունների հանգելու համար առնվում են միայն բնագրային, ոչ թարգմանական հատվածներ։

Ի տարբերություն Աճառյանի մոտեցման (Աճառյանը խուսափել է տեքստերում նույն բառերի կրկնությունից), մեր ընտրած հատվածներում այդպիսիք չեն մերժվել, որովհետև իրականում, առօրյա խոսքում բառային կրկնությունները անխուսափելի և բնորոշ երևույթ են։

Վիճակագրության համար ընտրած հատվածները համաժամանակ-

4 М. Р. Мелкумян, Исходные данные и статистико-комбинаторные выделения парадигмы первого морфологического типа в армянском языке, сб. «Статистико-комбинаторное моделирование языков», М., 1965.

5 Հմմտ. Բ. Ղազարյան, Հաճախականության բառարանի մի քանի հարցերի մասին, Լրաբեր, 1967, № 9.

յա բնույթ ունեն, թեև պետք է նշել, որ հնչավիճակագրության ժամանակ լեզվում պատկերը հիմնականում նույնն է ստացվում: Այդ բանում կարելի է համոզվել թեկուզ դրական արևելահայերենի համար ընտրած հատվածների վերլուծությունից:

Գրական արևելահայերենի համար վիճակագրության են ենթարկվել հետևյալ հատվածները.

1. Շիրվանզադեի «Քառոս» վեպի առաջին մասի երկրորդ հատվածը՝ «Երեք երեկո շարունակ հոգեհանգիստ էր կատարվում» նախադասությունից մինչև «Իսկ ամուսնանալ կարող էր միայն իր շուշլ կենցաղը փոխելուց հետո» նախադասությունը:

2. Նար-Դոսի «Ծն և նա» պատմվածքի սկզբից մինչև «Սակայն շարունակեմ պատմությունս» նախադասությունը:

3. Դ. Դեմիրճյանի «Նարգիզ» պատմվածքն ամբողջությամբ:

4. Ռ. Զարյանի «Հուշապատումի» երկրորդ հատորից «Հարություն կալենց» բաժնի սկզբից մինչև «Իսկ աչքերը նայում էին թախծով» նախադասությունը:

5. Վ. Փափազյանի «Հետադարձ հայացքի» երկրորդ գրքի սկզբից մինչև «Ե մանավանդ «Ղանթարը» իր աղմկոտ ներկայությամբ» նախադասությունը:

Վիճակագրած հատվածների արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Գրական արևմտահայերենի վիճակագրական քննության համար ընտրվել են հետևյալ հատվածները.

1. Զոհրապի «Ժիտին պարտքը» նորավեպի առաջին երկու մասերը:

2. Լ. Բաշալյանի «Միջերկրականի հիշատակների» երկրորդ մասի «Մաթաբանի ճգնաժամը» գործի աստղանիշից հետո ընկած հատվածը. «Այս տարի երկու շաբաթ առաջ...-ից մինչև «...Ինչ հմայաթափություն»:

3. Շ. Շահնուրի «Նահանջն առանց երգի» վեպի մուտքը:

4. Ա. Մառուկյանի «Մանկություն շունեցող մարդիկ» գրքի առաջին հատվածը:

5. Վահյանի «Ոսկի կամուրջ» գրքի «Գրողներու հանգստյան տունը» հատվածը:

6. Զ. Որբունու «Վարձու սենյակ» գրքի առաջին էջը մինչև «...կր զարնեի ուրիշի մը» Տվյալները տրվում են աղյուսակ 2-ում:

Քննության ընթացքում բառ ենք ընդունել բացատից բացատ ընկած տարածությունը, թեև հարկ է հատուկ նշել, որ այդ դեպքում բացատը միշտ չէ, որ համընկնում է ներկայիս արևելահայ կամ արևմտա-

Աղյուսակ N 1
Ընդամենը

Վ. Փափաղյան

Բ. Զարյան

Դ. Գեորգյան

Նար-Գոս

Շիրվանյան

Հեղինակ

Հեղինակ	Շիրվանյան		Նար-Գոս		Դ. Գեորգյան		Բ. Զարյան		Վ. Փափաղյան		Ընդամենը	
	Քիչ	%-ը	Քիչ	%-ը	Քիչ	%-ը	Քիչ	%-ը	Քիչ	%-ը	Քիչ	%-ը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1 Ա	279	16,296	281	15,744	458	12,967	210	13,925	216	13,926	1444	14,211
2 Ե	174	10,161	159	8,897	311	8,805	137	9,084	141	9,090	929	9,137
3 Ե (Է)	131	7,631	148	8,282	284	8,323	152	10,07	144	9,284	869	8,612
4 Բ	148	8,614	154	8,617	313	8,861	119	7,891	127	8,188	861	8,533
5 Ի	85	4,954	113	6,323	218	6,172	85	5,636	99	6,382	600	5,946
6 Ը	80	4,672	66	3,693	220	6,228	70	4,641	56	3,610	492	4,876
7 Մ	72	4,205	91	5,092	159	4,501	67	4,442	73	4,706	462	4,578
8 ՈՒ	80	4,672	60	3,357	133	3,765	54	3,580	67	4,319	391	3,904
9 Թ	53	3,095	85	4,756	108	3,057	56	3,713	68	4,384	370	3,666
10 Ո (0)	56	3,271	61	3,413	137	3,878	45	3,050	58	3,739	358	3,548
11 Վ	50	2,920	70	3,917	115	3,255	56	3,713	64	4,126	355	3,518
12 Կ	50	2,920	59	3,301	113	3,199	54	3,580	52	3,352	328	3,250
13 Տ	41	2,394	56	3,133	100	2,831	42	2,785	49	3,159	288	2,854
14 Մ	39	2,278	55	3,077	79	2,236	45	2,984	40	2,578	258	2,556
15 Լ	50	2,920	23	1,287	58	1,642	40	2,652	33	2,127	204	2,021
16 Ց	27	1,577	26	1,454	75	2,123	33	2,188	33	2,127	194	1,922
17 Հ	37	2,161	28	1,566	62	1,755	30	1,989	26	1,776	183	1,813
18 Ք	28	1,635	32	1,790	55	1,557	21	1,392	23	1,482	159	1,575
19 Ք	28	1,635	26	1,454	43	1,217	26	1,724	33	2,127	156	1,546

1	2	3	4	5	6	7
20 q	27	1,577	20	1,119	70	1,981
21 q	17	0,992	21	1,175	37	1,047
22 p	30	1,752	12	0,671	38	1,075
23 q	11	0,642	17	00,951	42	1,189
24 q	13	0,759	20	1,119	37	1,047
25 q	20	1,169	13	0,727	33	0,934
26 v	8	0,467	27	1,510	25	0,707
27 q	19	1,109	9	0,503	41	1,160
28 h	16	0,934	5	0,279	38	1,075
29 h	14	0,817	15	0,839	21	0,594
30 q	3	0,175	8	0,447	32	0,906
31 p	4	0,233	6	0,335	21	0,594
32 p	9	0,525	6	0,335	15	0,424
33 p	6	0,350	4	0,223	9	0,254
34 p	5	0,292	5	0,279	11	0,311
35 q	2	0,116	5	0,279	9	0,254
36 s	—	—	1,	0,005	2	0,056
Ръгъ- жъг	1712			1787		3532

8	9	10	11	12	13
13	0,862	4	0,257	134	1,328
21	1,591	12	0,773	111	1,100
9	0,596	19	1,225	108	1,070
14	0,928	23	1,482	107	1,060
20	1,326	15	0,967	105	1,040
10	0,663	23	1,482	99	0,981
18	1,193	6	0,386	84	0,832
5	0,331	6	0,386	80	0,792
9	0,596	4	0,257	72	0,713
11	0,729	8	0,515	69	0,683
8	0,530	10	0,644	61	0,604
7	0,464	6	0,386	44	0,436
4	0,265	2	0,128	36	0,356
6	0,397	5	0,322	30	0,297
4	0,265	2	0,128	27	0,267
3	0,198	4	0,257	23	0,227
—	—	—	—	3	0,029
	1508		1551		10090

հայ ուղղափառության ընդունված բացատրություն. պարզաբանենք՝ արեւմտահայերենի կը (զը) ներկայի կազմիչը գրվում է առանձին, իսկ արեւելահայերենի նույն կը-ն (պայմանականի եղանակիչը) գրվում է միասին. երկու դեպքում էլ այն առանձին միավոր չենք դիտել՝ կը(զը) բերեմ մեկ բառ, ինչպես նաև՝ ի վեր, ի վար և այլն նույնպես մեկ բառ:

Ընդհանրապես նկատի ունենք անկախ գործածությունը նույնպես. ըստ այդմ, եթե նախդիրները առանձին միավոր չեն դիտվել, ապա օժանդակ բայի խոնարհված ձևերը դիտվել են իբրև առանձին միավորներ:

Վիճակագրության արդյունքները հաստատում են այն կարծիքը, որ համակարգում եղած բաղաձայնների թիվը հակադարձ համեմատական է նրանց՝ տեքստում ունեցած հաճախականությանը: Այսպես՝ 83 տոկոս բաղաձայնները տեքստում կազմում են ընդամենը 58 տոկոս. համապատասխանաբար ընդամենը 17 տոկոս կազմող ձայնավորները տեքստում ստանում են շուրջ 42 տոկոս արժեք: Նշանակում է հարյուր հնչյունից արևմտահայերենում 42-ը ձայնավոր է (ի միջի այլոց այդ թիվը գրաբարում շուրջ մեկ տոկոսով ավելի է. նկատի պետք է ունենալ, որ գրաբարը հարուստ է երկբարբառներով):

Այսպիսով, աղյուսակներից կարելի է հետևյալ եզրակացություններին հանգել.

1. Գրական արևմտահայերենը, հայոց գրական լեզուներին հատուկ սկզբունքից չի շեղվում. բաղաձայն-ձայնավոր հարաբերակցության մեջ ձգտում է ձայնավորային լեզուների խումբը, այն դեպքում, երբ համակարգում բաղաձայնների գերակշռությունը որոշակի է, թեև դրական արևմտահայերենը արեւելահայերենի համեմատությամբ աչքի է ընկնում ձայնավորային համեմատաբար բարձր տոկոսով՝ շուրջ 17-ի դիմաց 19 տոկոս:

2. Վիճակագրության տվյալներով ամենահաճախական հնչյւթներն են՝ ա, ն, ե, ռ:

Ըստ վիճակագրության տվյալների, ամենահաճախական առաջին յոթ հնչյւթները կազմում են տեքստի շուրջ 52 տոկոսը: Բացի վերոհիշյալ հնչյւթներից՝ ա, ն, ե, ռ, այդ յոթնյակի մեջ են մտնում նաև ը, ի, ու ձայնավորները, այսպիսով հարյուր հնչյունի կեսից ավելին ձայնավորներ են և ձայնորդներ: Ընդ որում ձայնորդներից ն-ն հաճախականությամբ զիջում է միայն ա-ին՝ հարյուր հնչյունից մոտավորապես 10-ը ն-է, ն-ի ամենահաճախական բաղաձայն լինելը մի շարք հանգամանքներով է պայմանավորված: Նշենք դրանցից մի քանիսը.

Հետևյալը Լ. Բաշալյան Գ. Զոհրաբ Շ. Եսենուր Ա. Մ.

Հնչյուն	Բիլլ	%-ը	Բիլլ	%-ը	Բիլլ	%-ը	Բիլլ
1	2	3	4	5	6	7	8
Ա	213	13,46	275	14,28	172	13,17	305
Ե	169	10,68	185	9,60	101	7,73	224
Ե	140	8,84	154	7,99	122	9,34	217
Բ	114	7,20	148	7,68	103	7,89	177
Ը	102	6,44	106	5,50	76	5,82	144
Ի	82	5,18	106	5,60	65	4,98	117
ՈՒ	67	4,23	94	4,88	56	4,29	74
Ք	60	3,79	89	4,62	51	3,90	109
Թ	66	4,17	72	3,74	46	3,52	90
Վ	68	4,30	64	3,32	55	4,21	91
Օ	52	3,28	87	4,51	40	3,06	93
Մ	56	3,54	50	2,59	42	3,22	83
Դ	51	3,22	55	2,85	43	3,29	60
Դ	28	1,77	39	2,02	40	3,06	75
Բ	41	2,59	51	2,65	25	1,91	48
Ս	47	2,97	44	2,28	32	2,45	48
Հ	25	1,58	42	2,18	23	1,76	46
Թ	36	2,27	20	1,04	35	2,68	51
Զ	24	1,51	32	1,66	19	1,45	40

Աղյուսակ N 2

Վ. Վահան Զ. Որբունի Հնդամենը

%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը
9	10	11	12	13	14	15
13,04	333	14,35	62	11,83	1360	13,60
9,58	239	10,30	49	9,35	967	9,67
9,28	195	8,40	50	9,54	878	8,78
7,57	203	8,75	52	9,92	797	7,97
6,16	126	5,43	33	6,30	587	5,87
5,00	135	5,82	30	5,72	537	5,37
3,16	105	4,52	17	3,24	413	4,13
4,66	69	2,97	21	4,00	399	3,99
3,85	101	4,35	10	1,91	385	3,85
3,89	81	3,49	18	3,44	377	3,77
3,98	65	2,80	25	4,77	362	3,62
3,55	79	3,40	20	3,82	330	3,30
2,57	65	2,80	17	3,24	291	2,91
3,20	70	3,02	22	4,20	274	2,74
2,05	71	3,05	9	1,72	245	2,45
2,05	45	1,94	6	1,14	222	2,22
1,97	41	1,77	13	2,48	190	1,90
2,18	28	1,20	6	1,14	176	1,76
1,71	30	1,29	11	2,10	156	1,56

1	2	3	4	5	6	7	8
Л	23	1,45	35	1,82	32	2,45	34
Ф	27	1,70	22	1,14	18	1,38	34
Р	20	1,26	37	1,92	15	1,15	28
У	12	0,76	21	1,09	15	1,15	30
Д	14	0,88	15	0,78	27	2,07	27
С	11	0,69	19	0,99	8	0,61	30
Н	12	0,76	21	1,09	11	0,84	21
В	10	0,63	16	0,83	11	0,84	16
Э	5	0,32	15	0,78	14	1,07	13
Х	7	0,44	8	0,41	6	0,46	8
А	1	0,06	3	0,16	3	0,23	6
Б	—	—	—	—	—	—	—
Среднее		1583		1927		1306	

9	10	11	12	13	14	15
1,45	23	0,99	7	1,34	154	1,54
1,45	38	1,64	9	1,72	148	1,48
1,19	30	1,29	7	1,34	137	1,37
1,28	33	1,42	6	1,14	117	1,17
1,15	27	1,16	4	0,76	114	1,14
1,28	27	1,16	8	1,53	103	1,03
0,90	16	0,69	1	0,19	82	0,82
0,68	17	0,73	3	0,57	73	0,73
0,55	14	0,60	3	0,57	64	0,64
0,34	7	0,30	2	0,38	38	0,38
0,26	7	0,30	3	0,57	23	0,23
—	1	0,04	—	—	1	0,01
2339		2321		524		10000

1) Ե-ն հանդես է գալիս ամենահաճախական ածանցների կազմում՝ ություն, ական, ուն, անի, ունի և այլն, 2. Ե-ն հոգնակազմ թեքույթների տարր է (ներ), 3. Ե-ն բայածևերի երրորդ դեմքի (հոգնակի թիվ) ցուցիչ է (զրեն) և այլն:

Ամենահաճախական հնչույթների պատկերը վկայում է, որ Տ. Միլևսկու ներկայացրած աշխարհի լեզուների հնչույթների առաջնային շարքը ավելի հստակորեն դրսևորվում է հայերենում, ուր հանդես են գալիս ոչ միայն ա-ի-ու-է ձայնավորային հակադրությունը, այլև Ե-բ առաջնային հնչութային միավորները:

Որպես երկու գրականներին բնորոշ ընդհանուր հատկանիշ նշելի է Ե հնչույթի հաճախականությունը:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ լեզուն ունի վիճակագրական կայուն արժեքներով բնութագրվող որոշակի հնչութային ոլորտներ (խոսքը մանավանդ բաղաձայնական համակարգի ներսում հղած ոլորտների մասին է): Եթե տվյալ ոլորտում միավորներից մեկը (հնչույթը) դուրս է գալիս, ապա նրա վիճակագրական բեռնվածությունը բաշխվում է տվյալ ոլորտում հղած մյուս միավորների վրա: Այսպես, եռաշարք՝ բ-պ-փ, գ-կ-բ, դ-ա-բ, ձ-ծ-ց, ջ-ն-շ հակադրությունները կազմում են համապատասխան եռանդամ ոլորտներ արևելահայերենի համար և երկանդամ հակադրությամբ բնութագրվող ոլորտներ՝ բ-փ, գ-բ, դ-բ և այլն: արևմտահայերենի համար: Իմանալով արևելահայերենին հատուկ եռաշարք հակադրությունների անդամների վիճակագրությունը առանձին-առանձին, կարելի է պնդել, որ դրանց ընդհանուր միջին արժեքը համապատասխանում է արևմտահայերենի երկշարք համապատասխան հակադրությունների ոլորտի անդամների վիճակագրական արժեքներին գումարին: Ստորև ներկայացնում ենք երկու բրան լեզուների հնչութային արժեքներն՝ ըստ նվազող կարգահամարների (աղյուսակ 3):

Հիմք ունենալով աղյուսակ 3-ում հղած տվյալները, այժմ ներկայացնենք նույն արժեքները միասնական գծապատկերով:

Գծապատկերում ուղղահայաց գծի վրա տրված են հնչույթների արժեքները, հորիզոնական գծի վրա՝ հնչույթները: Արևելահայերենի հնչութները ներկայացվել են հոծ գծով, արևմտահայերենինը՝ կետագծով:

Ինչպես երևում է թե՛ գծանկարից և թե՛ աղյուսակներից, երկու լեզվավիճակների ամենահաճախական առաջին չորս միավորները բացարձակապես համընկնում են՝ ա, Ե, ն, բ: Այնուհետև՝ նվազող հաճախականության պատկերը ցույց է տալիս, որ կարգահամարներով չհամընկնող հնչույթները երկու գրականներում փոխադարձաբար մոտ գտնվող


միավորներ են: Այսպես, արևելահայերենում ըստ նվազող հաճախականության ին նախորդում է ը-ին, արևմտահայերենում՝ հակառակը: Պատահական է արդյոք այդ. բացարձակապես ոչ, եթե նկատի ունեն-

Ա Ղ Յ Ն Ս Ա Կ Ց 3

Արևելահայերեն			Արևմտահայերեն	
կարգահամար	հնչույթ	%-ը	հնչույթ	%-ը
1	Ա	14,31	Ա	13,60
2	Ե	9,14	Ե	9,67
3	Ե (է)	8,61	Ե (է)	8,78
4	Բ	8,53	Բ	7,97
5	Ի	5,95	Ը	5,87
6	Ը	4,68	Ի	5,37
7	Մ	4,58	ՈՒ	4,13
8	ՈՒ	3,90	Ք	3,99
9	Թ	3,67	Թ	3,85
10	Օ (ո)	3,55	Վ	3,77
11	Վ	3,51	Օ	3,62
12	Կ	3,25	Մ	3,30
13	Տ	2,85	Դ	2,91
14	Ս	2,56	Դ	2,74
15	Լ	2,02	Թ	2,45
16	Ց	1,92	Ս	2,22
17	Հ	1,81	Հ	1,90
18	Դ	1,57	Ց	1,76
19	Թ	1,55	Ջ	1,56
20	Ք	1,33	Լ	1,54
21	Ջ	1,10	Փ	1,48
22	Բ	1,07	Բ	1,37
23	Դ	1,06	Ղ	1,37
24	Պ	1,04	Ջ	1,14
25	Ղ	0,98	Շ	1,03
26	Մ	0,83	Դ	0,82
27	Շ	0,79	Խ	0,73
28	Խ	0,71	Ջ	0,64
29	Դ	0,68	Ջ	0,38
30	Ջ	0,64	Ժ	0,23
31	Փ	0,44	Ֆ	0,01
32	Ժ	0,36		
33	Ջ	0,30		
34	Ճ	0,27		
35	Ջ	0,23		
36	Ֆ	0,03		

նանք տվյալ լեզուների քերականական կառուցվածքը: Այսպես՝ արևմտահայերենում ներկա ժամանակը կազմվում է կը եղանակիչով, Բայական ժամանակների մեջ ամենաշատ կիրառվողը ներկան է: Այդտեղից էլ ը

ձայնավորի համեմատաբար բարձր հաճախականությունը՝ արևելահայերենի համեմատությամբ: Մենք նշեցինք միայն մեկ փաստ: Իհարկե, կարելի է նշել մյուս հնչյունների համար առանձին-առանձին գործառական բեռնվածության պատկերում ունեցած շեղումները երկու գրականներում: Բայց հատկապես կանգ առնենք հետևյալ երևույթի վրա, եթե արևելահայերենում ձայնեղները, խուլերը և շնչեղ խուլերը միասին



վերցրած կազմում են տեքստի շուրջ 19 տոկոսը, ապա երկշարք բաղաձայնական համակարգ ունեցող արևմտահայերեն տեքստում դարձյալ ձայնեղները և շնչեղ խուլերը միասին վերցրած կազմում են շուրջ 19 տոկոս: Այդ ևս վկայում է այն մասին, որ գործառական բեռնվածության ժամանակ հնչյունները ոչ թե առանձին-առանձին, այլ որոշակի ոլորտներով են ունենում իրենց կայուն արժեքները: Այսինքն՝ եթե հայտնի է, որ երկու գրականներում ձայնավորները կազմում են 41 տոկոս, ապա այդ նշանակում է, որ նրանցից որևէ մեկում այս կամ այն ձայնավորի հաճախականության միջին ցուցիչից բարձր կամ ցածր արժեքներ ունենալու դեպքում ստեղծվում է ձայնավորային ոլորտի մյուս միավորների բարձր կամ ցածր հաճախականության՝ ռեալ հնարավորություն: Այդպես էլ եղել է մեր վիճակագրած հատվածներում. այսպես՝ եթե արևելահայերենում ա-ն ավելի հաճախական է (14 տոկոսից ավելի), քան արևմտահայերենում (13 տոկոսից ավելի), ապա մյուս ձայնավորները արևմտահայերենում հարաբերաբար մեծ արժեքներ են ստացել (հմմտ. աղյուսակները և գծագիրը): Ինչպես հստակ կերպով երևում է գծագրից՝ երկու գրականների գործառական բեռնվածության կորերը հիմնականում համընկնում են և շեղումներ են տալիս այն

դեպքում, երբ արևմտահայերենում տվյալ հնչյունը կատարում է արևելահայերենի երկու հնչյունի դեր. այսպես, շեղումները զգալի են գ, զ, ք, ձ, փ, ք, ր հնչյունների դեպքում, որովհետև արևմտահայերենի համապատասխան հնչյունների արժեքները միջին հաշվով համընկնում են արևելահայերենի ինչպես ձայնեղ և պարզ խուլերին, այնպես էլ՝ ձայնեղ և շնչեղ խուլերի արժեքներին միասին վերցրած:

Վիճակագրական քննությունը ապացուցում է այն դիտարկումը, որ գործառական հարաբերաբար մեծ բեռնվածություն ունեն այն հնչյունները, որոնք ավելի շատ հարաբերությունների մեջ են մտնում: Եվ իրոք, երկշարք հարաբերություններ ունեցող հնչյունները ավելի քիչ հաճախական են, քան եռաշարքը: Ի վերջո, եթե գ, ծ հնչյունները երկշարք են, ապա ձ, ջ հնչյուններն էլ եռաշարք են, բայց ցածր հաճախականություն ունեն: Երկու գրականներում էլ ֆ-ն ամենացածր հաճախականություն ունեցող հնչյուն է. կարելի է ասել, որ ֆ-ն երկու գրականների ամենաթույլ հնչյունն է:

Այժմ առանձին-առանձին անդրադառնանք բաղաձայն և ձայնավոր հնչույթներին խոսքում: Տեքստի բաղաձայնական հագեցվածությունը, այսինքն՝ ձայնավոր և բաղաձայն հնչյունների հարաբերակցությունը, տիպաբանական կարևոր ցուցիչներից է: Երկու գրականներում ձայնավորների և բաղաձայնների քանակային հարաբերությունը հետևյալ պատկերն ունի.

	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
	համակարգ	տեքստ	համակարգ	տեքստ
ձայնավորներ	6 13,89	41,20	6 19,40	41,37
բաղաձայններ	30 86,11	58,80	25 80,60	58,73

Ինչպես տեսնում ենք, համակարգում ունեցած տարբերությունը խոսքի մակարդակում բացարձակապես հարթվում է: Երկու գրականներում էլ ձայնավոր-բաղաձայն հարաբերակցությունը ստանում է հետևյալ արժեքները՝ 41—59:

Ըստ այդ տվյալի, կարելի է ասել, որ արևելաֆոնետիկ և արևմտաֆոնետիկ աշխարհի լեզուների շարքում միջին դիրք են զբաղում: Այդ նշանակում է, որ հայերեն տեքստի բաղաձայնական հագեցվածության աստիճանը ուղղակի վկայում է, որ հայերենում բաղաձայնական կապակցություններ թույլատրելի են միայն որոշ սահմաններում: Իհարկե, պետք չէ կարծել, թե ունենալով միևնույն ցուցիչները, երկու գրականներում հավասարապես թույլատրելի են բաղաձայնական միևնույն կապակցությունները: Բնավ: Այսպես, արևելահայերենը արևմտահայերենի

համեմատությամբ թույլատրում է բաղաձայնական կապակցություն բառասկզբում, մինչդեռ այն արևմտահայերենին բնորոշ չէ,

Հնչյթային վիճակագրության արժեքները կարող են որոշակի գաղափար տալ նաև տվյալ լեզուների քերականական կառուցվածքի առանձնահատկությունների մասին և հակառակը: Բերենք մի օրինակ՝ արևելահայերենի ի ձայնավորը արևմտահայերենի համապատասխան հնչյութի համեմատությամբ ավելի հաճախական է (առաջինում այն ունի 4 կարգահամարը, երկրորդում՝ 6, բայց ահա արևմտահայերենի ու հնչյութը ավելի բարձր արժեքներ ունի, քան արևելահայերենի ունի (համապատասխանաբար 7 և 8 կարգահամարներ): Դա վկայում է այն մասին, որ արևելահայերենում ի-ն որպես հոլովական թեքույթ ավելի մեծ դեր է կատարում, քան արևմտահայերենի համապատասխան հընչույթը և հակառակը, նույն դերով արևմտահայերենի ուն ավելի մեծ բեռնվածություն ունի (ինչպես ցույց կտրվի հոլովման հարացույցի քննության ժամանակ, իսկապես երկու դրականներն, հոգնակիների ղուգադրությունը դրա լավագույն ապացույցը կարող է ծառայել):

Հնչյութների հաճախականությունը միաժամանակ ցույց է տալիս, թե խոսքի գործարանները ինչպիսի բեռնվածություն ունեն: Ըստ լեզվի բարձրացման աստիճանի, երկու դրականներում ձայնավոր հնչյուններն ունեն բաշխման հետևյալ պատկերը.

լեզվի բարձրացում	Արևելահայերեն	Արևմտահայերեն
վերին Ի, Ու	9,85	9,50
միջին է, Ը, Օ	16,94	18,27
ստորին Ա	14,31	13,60

Ինչպես տեսնում ենք, եթե երկու գրականների վերին շարքի ձայնավորներն իրենց արժեքներով համընկնում են, իսկ ստորին շարքի ա ձայնավորի արժեքների տարբերությունը էական չէ, ապա միակ քիչ թե շատ զգալի շեղումը տալիս են միջին շարքի ձայնավորները: Ընդ որում արևմտահայերենը արևելահայերենի համեմատությամբ ավելի շատ է դիմում միջին շարքի ձայնավորներին: Դա պայմանավորված է, անշուշտ, դարձյալ քերականական կառուցվածքի առանձնահատկություններով: Այսպես՝ արևմտահայերենի բացառականը կազմվում է արևելահայերենից ից-ի փոխարեն է-ով, որն էլ բարձրացնում է է-ի արժեքը: Ը-ն նույնպես արևմտահայերենում բարձր արժեքներ ունի, քանի որ այն հանդես է գալիս կը եղանակիչի կազմում, իսկ վերջինս մեծ դեր ունի արևմտահայերենի բայի խոնարհման համակարգում:

Միջին շարքի ձայնավորներից ը-ն երկու գրականներում էլ հանդես է գալիս որպես «ոչ-մշակութային» ոլորտի հնչյութ (բնաձայնական բա-

ուերում, նմանաձայնություններում և այլն՝ զրոգրոալ, ճրոճրոալ-դրգ-դրգալ և այլն)։

Ձուգադրվող տվյալները, բացառությամբ միջին շարքի ը ձայնավորի, գերադանցապես համընկնում են (անհամապատասխանությունները վեց տոկոս չեն կազմում)։ Միջին շարքի դեպքում եղած մեկ տոկոս անհամընկնումը դարձյալ պայմանավորված է քերականական վերոհիշյալ կառուցվածքային առանձնահատկությամբ (կը եղանակիչի ը բաղադրիչով)։

Շրթնայնությունը երկու դրականներում ունի հետևյալ արժեքները. արևելահայերենում՝ 7,45 տոկոս, արևմտահայերենում՝ 7,75 տոկոս։ Դարձյալ արժեքների զարմանալի զուգահիշում (համընկնում)։

Եթե ամփոփենք բերված տվյալները, ապա կարելի է ասել, որ երկու գրականների ձայնավորային ոլորտում ունեցած մեծ ընդհանրությունները որոշակի կերպով ի հայտ է բերվում տեքստում նրանց ունեցած դրժեք բացարձակ համապատասխանող արժեքներով (երկուսում էլ, ասենք, ետին շարքի ձայնավորները ղղալի տոկոս են կազմում (շուրջ 21 տոկոս), երկուսում էլ միջին բարձրացումը գերակշիռ դիրք է զրավում)։

Այլ է բաղաձայն հնչույթների տեքստում ունեցած բաշխվածությունը. Ըստ ձայնի մասնակցության, բաղաձայնների բաշխումը խոսքում երկու գրականներում ունի հետևյալ պատկերը.

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ձայնորդներ	28,62	27,15
ձայնեղ բաղաձայններ	3,98	9,79
Խուլեր	11,62	9,99

Եթե երկու գրական լեզուների ձայնորդների արժեքները էական տարբերություններ չեն տալիս, քանի որ այդ շարքը ինչպես համակարգում, այնպես էլ տեքստում նույն պատկերն ունի, ապա ձայնեղների և խուլերի արժեքների միջև ղղալի տարբերություններ կան. բնականաբար, ինչպես սպասելի էր, արևմտահայերենի ձայնեղների արժեքները շուրջ 6 տոկոսով բարձրացել են, ըստ այդմ համապատասխանաբար գրեթե նույնչափ իջել է խուլերի արժեքը, որը պայմանավորված է արևմտահայերենի պարզ խուլերի բացակայությամբ։

Եթե արևելահայերենը հնդեվրոպական մի շարք լեզուներին հատուկ գիծը պահպանում է՝ խուլ բաղաձայնների գերակշռությունը ձայնեղների

հարաբերությամբ (հմմտ. 4 տոկոս՝ 15 տոկոսի համեմատությամբ), ապա արևմտահայերենին այն բնորոշ չէ. այստեղ գործ ունենք ձայնեղների և խուլների հավասարակշռության երևույթի հետ (երկուսում էլ շուրջ 10 տոկոս):

Կարելի է նույն ձևով ներկայացնել երկու գրական լեզուների բաղադրանքների հարաբերությունը ըստ կազմության եղանակի, ըստ կազմության տեղի և այլն, սակայն, ինչպես ցույց են տալիս արժեքները, նրանք հիմնականում համընկնում են և էական տարբերությունների մասին արդեն խոսվեց ձայնեղների հետ կապված:

Տխաբանական գրականության մեջ այն համոզումը կա, որ շփական բաղադրանքների շարքում առաջնալեզվայինները ավելի հաճախական են (t, d), ապա գալիս են ետնալեզվայինները և հաճախականության ամենափոքր արժեքներ ունեն շրթնայինները (p, b): Այժմ տեսնենք, թե ընդհանուր հնդեվրոպական (համահնդեվրոպական) այդ երևույթի (ընդհանրույթի) համեմատությամբ ինչպիսի պատկեր են տալիս մեր երկու գրականները.

Հնդեվրոպական լեզուներ t	(6,4),	k	(3,7),	d	(3,1),	p	(2,8),	b	(1,2),	g	(1,3)	
Արևելահայերեն		տ	(2,8),	կ	(3,2),	դ	(1,1),	պ	(2,4),	բ	(1,1),	
										գ	(1,3),	
Արևմտահայերեն	թ.	(2,4),	ք	(2,7),	դ.	(2,9),	փ	(1,5),	բ	(1,5),	գ	(3,9),

Ինչպես տեսնում ենք համեմատությունից, արևելահայերենում, ինչպես և հնդեվրոպական լեզուներում, խուլ հնչյունները ավելի հաճախական են, քան ձայնեղները (ընդ որում ամենահաճախականը տ-ն է, իսկ հայերենում՝ կ-ն), բայց ըստ աստիճանական նվազմամբ արժեքների որոշ հարաբերություններ են առկա: Նախ աչքի է զարնում, բացի տ և կ հնչյուններից, դ, պ, բ, գ հնչյունների համեմատաբար հավասարաչափ բաշխումը (մոտ հաճախականություններ ունենալը):

Այսպիսով, ամենահաճախական հնչյունների հաջորդականության մեջ հայերենում տեղաշարժ է առկա (հայերենում կ-ն ավելի հաճախական է, քան տ-ն, որը դարձյալ պայմանավորված է քերականական համակարգում կ-ի ունեցած հարաբերաբար մեծ բեռնվածությամբ. հիշենք նրա հանդես գալը որպես եղանակիչ): Այդ է նաև պատճառը, որ արևմտահայերենում գ-ն այդքան բարձր արժեքներ է ստացել և տվել ամենաբարձր շեղումը՝ 3,99:

Համեմատությունից պարզվում է, որ տ-կ տեղաշարժը (ըստ հաճախականության շտրքի) զուտ արևելահայերենին հատուկ երևույթ

չէ. արեւմտահայերենում այն դրսևորվել է ք-ֆ տեղաշարժով (համապատասխանաբար ունենալով 2,45 և 2,74 արժեքները)։

Ծրկու գրական լեզուների հնչութային վիճակագրությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների՝ արևելահայ և արեւմտահայ գրականները, ի տարբերություն կառուցվածքային մակարդակում ունեցած զգալի տարբերությունների, հնչավիճակագրական քննության ոլորտում ի հայտ են բերում զգալի ընդհանրություններ։ Ամենից առաջ երկու լեզվավիճակներն էլ բնութագրվում են կայուն վիճակագրական արժեքներով։

Վիճակագրական տվյալների զուգադրությունը ցույց է տալիս, որ ընդհանրապես հայերենում հնչւյթների բեռնվածության պատկերը էական շեղումներ չի տալիս։